

Մովսես Խորենացու անվան համալսարանի ռեկտոր

Ա.Ս.Աղաբաբյանի

2014թ. տարեկան հաշվետվություն

Ուսումնական գործընթացի ընթացիկ կազմակերպում

Հաշվետու ուսումնական տարում ձեռնարկվել են ուսումնական գործընթացի բնականոն ընթացքի ապահովմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Իրականացվել է բակալավրիատի ու մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման առաջին կուրսի ուսանողների և ԵՄԽՀ-ի միջև ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ պայմանագրերի կնքման գործընթացը:

Հաշվետու ուս.տարվա ուսումնական գործընթացը կազմակերպելու համար հաշվառվել է լսարանային ֆոնդը, իրականացվել են աշխատանքներ այն արդյունավետ օգտագործելու և դասերի կանոնավոր կայացման ուղղությամբ:

Զեղչերի կիրառման գործընթացն առավել հստակ և անթերի կազմակերպելու նպատակով ուսումնամեթոդական վարչությունը շարունակել է առաջադիմության վերահսկման աշխատանքները:

Կրթական գործունեություն

Շարունակվել է աշխատանքները ծրագրային բարեփոխումների, ուսումնական գործընթացի կազմակերպման ու պլանավորման կատարելագործման, եվրոպական չափորոշիչներին համահունչ որակի ներքին ապահովման համակարգի բարելավման, բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում կրեդիտային համակարգի իրականացման, դասավանդման և ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացների բարելավման և մի շարք այլ ուղղություններով:

Ընդունելություն

2013/14 ուս.տարում առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում դիմորդների թիվը դարձել է համապատասխանաբար 171 և 19 :

Կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում համալսարանի բակալավրիատի դիմորդների բաժնեմասը կազմել է 1,8 %:

2013/14 ուս.տարում բակալավրիատ ընդունվածների թիվը կազմել է 166, իսկ մագիստրատուրա՝ 17:

Հաշվետու ուս.տարում ԵՄԽՀ օտարերկրյա դիմորդների թիվը բակալավրիատում կազմել է 33, իսկ մագիստրատուրայում 0:

2013/14 ուս.տարում հեռակա ուսուցման համակարգում դիմորդների թիվը բակալավրիատում կազմել է 137:

Մեծ աշխատանք է տարվել ավագ դպրոցների և պետական մասնագիտական հաստատությունների 2013/14 ուս.տարվա շրջանավարտների հետ, նրանց ներկայացվել են համալսարանական մասնագիտությունները, ծանոթացրել շարունակական կրթության և ընդհանուր հիմունքներով բակալավրի ծրագրով բուհ ընդունվելու կարգին:

Խիստ կարևորելով հանրակրթային դպրոցների բարձր դասարանների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ վարչությունը հաշվետու տարվա ընթացքում մայրաքաղաքի և մարզերի 100-ից ավելի դպրոցների աշակերտների համար կազմակերպել է ճանաչողական այցեր և դասախոսություններ:

Վերոհիշյալ համալիր աշխատանքների շնորհիվ է նաև ապահովվել վերջին տարիների դիմորդների թվի անընդհատ աճը:

Հիմնական ուսանողական համակազմ և շրջանավարտներ

2013/14 ուս.տարում ԵՄԽՀ առկա ուսուցման համակարգի թվակազմը եղել է 792, որից 757 բակալավրիատում, իսկ 35՝ մագիստրատուրայում:

Հեռակա ուսուցման համակարգում սովորել է 407 ուսանող:

Օտարերկրյա ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 134, որից 95 -ը առկա ուսուցմամբ, իսկ 33՝ հեռակա և 6-ը մագիստրատուրայի բաժնում:

Համալսարանի հիմնական ուսանողական թվակազմում մագիստրոսական համակազմի հաշվեկշիռը 4,42% է, իսկ օտարերկրյա և հեռակա ուսուցմամբ ուսանողներինը՝ համապատասխանաբար 16,9 -%, 51,2 %:

2013/14 ուս.տարում համալսարանը տվել է առկա ուսուցմամբ 151 շրջանավարտներ, որից 133-ը՝ բակալավրի կրթակա ծրագրով, 18-ը՝ մագիստրոսի, իսկ հեռակա ուսուցմամբ /ներառյալ նախորդ տարիների քննության չներկայացածները/ 44 շրջանավարտ:

Առկա ուսուցմամբ բակալավրիատը գերազանցիկության դիպլոմով ավարտել է 16 շրջանավարտ, մագիստրատուրան՝ 6: Հեռակա ուսուցմամբ բակալավրիատը գերազանցիկության դիպլոմով ավարտել է 1 շրջանավարտ:

Շրջանավարտները

Համալսարանի ռեկտորի հրամանով բակալավրի կրթակա ծրագրով հավատարմագրված մասնագիտությունների գծով առկա բաժնում թույլատրված 151 ուսանողներից մասնակցել են բոլորը, որոնցից 133 քննությունները հանձնել են միայն դրական գնահատականներով, այդ թվում 19 գերազանց գնահատականներ, որոնցից 16 ը պետական քննական հանձնաժողովի որոշմամբ արժանացել են գերազանցության դիպլոմի:

Հեռակա բաժնում ռեկտորի հրամանով քննություններին թույլատրված 53 ուսանողներից քննություններին մասնակցել են բոլորը, որոնցից 44 ստացել են դրական գնահատականներ, այդ թվում 1 ուսանող քննությունները հանձնել է “գերազանց” գնահատականներով և պետական քննական հանձնաժողովի որոշմամբ արժանացել է գերազանցության դիպլոմի:

Մագիստրատուրայի բաժնում ռեկտորի հրամանով մագիստրոսական թեզերի պաշտպանության թույլատրված 18 ուսանողներից մասնակցել են 18-ը, որոնք բոլորն էլ ստացել են դրական գնահատականներ: Նրանցից 6-ը քննական հանձնաժողովի որոշմամբ արժանացել են գերազանցության դիպլոմի:

Ըստ մասնագիտությունների պատկերը հետևյալն է.

Առկա բաժին

	Թույլատրվել է մասնակցելու	Մասնակցել են	Միայն դրական գնահատականներ	Միայն գերազանց գնահատականներ	Գերազանցության դիպլոմ	Չեն մասնակցել կամ ստացել են անբավարար
Հայոց լեզու և գրականություն	14	14	14	4	4	0
Օտար լեզու և գրականու- թյուն (անգլերեն լեզու)	17	17	17	7	4	0
Ինֆորմատիկա և կիրա- ռական մաթեմատիկա	18	18	17	0	0	1
Մանկավարժություն և մեթոդիկա	28	28	22	3	3	6
Միջազգային տնտ. հարաբերություններ	31	31	26	3	3	5
Իրավաբանական	43	43	37	2	2	6

Հեռակա բաժին

	Թույլատրվել է մասնակցելու	Մասնակցել են	Միայն դրական գնահատականներ	Միայն գերազանց գնահատականներ	Գերազանցության դիպլոմ	Չեն մասնակցել կամ ստացել են անբավարար
Հայոց լեզու և գրականություն	5	5	4	-	-	1
Օտար լեզու և գրականու- թյուն (անգլերեն լեզու)	3	3	3	1	0	0
Ինֆորմատիկա և կիրա- ռական մաթեմատիկա	3	3	3	0	0	0

Մանկավարժություն և մեթոդիկա	12	12	11	0	0	1
Միջազգային տնտ. հարաբերություններ	12	12	11	1	1	1
Իրավաբանական	18	18	12	0	0	6

Մագիստրատուրայի բաժին

	Թույլատրվել է մասնակցելու	Մասնակցել են	Միայն դրական գնահատականներ	Միայն գերազանց գնահատականներ	Գերազանցության դիպլոմ	Չեն մասնակցել կամ ստացել են անբավարար
Հայոց լեզու և գրականություն	2	2	2	2	2	0
Օտար լեզու և գրականություն (անգլերեն լեզու)	4	4	4	0	0	0
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	1	1	1	1	0	0
Մանկավարժություն և մեթոդիկա	2	2	2	2	0	0
Միջազգային տնտ. հարաբերություններ	4	4	4	3	3	0
Իրավաբանական	5	5	5	1	1	0

Ռասախոսական կազմ և ուսումնական բեռնվածություն

2013/14 ուս. տարում համալսարանի դասախոսական կազմում եղել է 51 դասախոս, որից պրոֆեսոր՝ 4 , դոցենտ 29, ասիստենտ և դասախոս 18: Այդ կազմի 64,7 % -ը ունի գիտական աստիճան: Իզական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը կազմել է 49,01%:

Շարունակվել է ԵՄԽՀ դասախոսական կազմի երիտասարդացման գործընթացը:

Հաշվետու տարում դասախոսական կազմը համալրվել է 5 նոր դասախոսներով: Դասախոսական կազմում մինչև 35 տարեկան դասախոսների թիվը կազմում է 9, 35-65 տարեկանները՝ 35 , իսկ 65-ից բարձր՝ 7L

Միջազգային համագործակցություն

Բուհում սովորում են 134 օտարերկրյա ուսանողներ:

2014թ. Մայիսի 14,15,16 կայացավ EURASHE_Ի կողմից հրավիրված գիտաժողով,որտեղ մասնակցեց նաև մեր բուհը, որպես բուհի հիմնադիր և ռեկտոր ներկայացրեցի զեկուցում հետևյալ թեմայով՝ <<ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴԵՐՈ>>:

Թեման շատ կարևոր և ուսանելի, դրական էր արտասահմանյան և հայ գործընկերների կարծիքը, քանի որ հստակ ներկայացված էր իմ տեսակետներն ու առաջարկությունները:

Որակի ապահովում

Հաշվետու ժամանակահատվածում Որակի ապահովման կենտրոնը շարունակել է իր գործունեությունը բուհում որակյալ կրթություն ապահովելու նպատակով: Շարունակվել են 2013թ.-ին շահած դրամաշնորհի շրջանակներում իրականացվող աշխատանքները: Դրամաշնորհի շրջանակներում իրականացված գործողությունների հաշվետվությունը ներկայացվել է տարեվերջին բուհում կազմակերպված կոնֆերանսի ժամանակ: